ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«18» «փետրվարի» 2025 թվական № 55-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 378-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 2-ի «Շրջակա միջավայրի նախարարության «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի հուլիսի 29-ի N 249-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 378-Լ հրամանի (այսուհետ՝ Հրաման) հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Հրամանի 5-րդ բաժնի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ, ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ, ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԷԿՈՏՈՒՐԻԶՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ»:

2. Հրամանի հավելվածի 46-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

3. Հրամանի հավելվածը լրացնել նոր 49.1 կետով.

«49.1. Էկոտուրիզմի կազմակերպումը՝

1) իրականացվում է համագործակցություն տուրիստական կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների հետ,
2) կազմակերպվում է այցելուների ընդունելություն, էկոկրթական միջոցառումներ և շրջայցեր,
3) պատրաստվում և ներկայացվում է գիտական, գիտաճանաչողական գրականություն, տեղեկատվական և գովազդային նյութեր՝ սոցիալական ցանցերում:»:

4. Շրջակա միջավայրի նախարարության «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ սույն Հրամանը ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված

կարգով ապահովել «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

2/18/2025

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

Երևան